էին նպաստաւոր թիւրք պատիւրակների համար։ Թոյլատրւում էր դաղթած ազգաբնակութեան վերադառնալ և վերաբնակել նախկին տեղերում, բացի ռազմագիտական վայրերից։ Տրւում էր տեղական ինքնավարութիւն, զեմստուս, իրաւունք դաւել ըստ իրենց սովորութիւնների, մասնակցել խորհրդարանի ընտրութիւններին, պահել սեփական վարչութիւն և այլն։ Դրա փոխարէն, որպէս պահանջ, ճանաչել այդ տերիտորիան Հայաստանի անբաժան մաս՝ տալով որոշ քանակութեամբ դէնք, ձի և որոշ առարկաներ, միևնոյն ժամանակ ապահովելով երկաթուղու դիծը մինչև Ջուլֆա։

Պատիւրակութիւնը համաձայնեց ընդունել յիշեալ պայմանները։ Սակայն, ապստամբ շրջաններում գտնւած եկւոր ագիտատորների ազդեցութեան շնորհիւ, մերժւում է բանակցութիւնների արդիւնքը։

Մեր զօրքերը առանց երկար սպասելու՝ մի ժամից յետոյ առաջ շարժւեցին դէպի Շահթախթ, որ և գրաւեցին՝ կարուկ հարւածներ հասցնելով թշնամուն և ահագին կորուստներ պատճառելով։ Այդ կռիւներին մասնակցում էր ադրբէջանեան զօրքերի մի մասը, տաճկական սպաներ և կանոնաւոր զինւորներ, թնդանօթներով և գնդացիրներով։ Բայց մեր հիացմունքի արժանի քաջարի զօրքը, իր ղեկավարներով կարողացաւ ընկճել թշնամուն և յաղթել (երկարատև բուռն ծափեր)։

Այն ժամանակ թիւրքերի կողմից եկաւ նոր պատիւրակութիւն։ Մենք չծանրացրինք նախկին մեր պայմանները, ոչ մի պահանջ չաւելացրինք, այլ աւելի թեթևացրինք՝ միայն մի սահմանափակում դնելով, որ դաղթած ազգաբնակութիւնը չպիտի վերադառնայ Շարուր և Վեղի-Բասար, մինչև նոր կարգադրութիւն և նոր պայմաններ ստեղծւելը։

Բանակցութիւնները տեւեցին 2–3 օր։ Այն ժամանակ, երբ ժողովրդի պատիւրակները համաձայնում էին ընդունել պայմանները, ժողովուրդը այս անդամ նոր ազդեցութեան է ենթարկւում՝ բոլշևիզմի, որի վրա և իրենց յոյսն էին դրել։

Այժմ մեր հանդէպ կանգնած են ոչ միայն տեղական կազմակերպւած ուժերը, այլև հեռու հիւսիսից եկած կարմիր Ռուսաստանի և հեռու հարաւից եկած նոյնպէս կարմիր — բայց ոչ խօսքերով, այլ արիւնով — կարմիր Տաճկաստանի թափթփուկները՝ երեքը իրար միացած, երեքը իրար դաշնակցած։

Մենք ոչ մի արդելքի առաջ կանգ չենք առնի ապահովելու մեր անկախութիւնը նման համագործակցութեան դաւերից։ Եւ իրրև փաստ դրան, կարող եմ յայտարարել, որ մեր զօրամասերը Զանգեզուրում յետ են շպրտել մեր թշնամու ուժերին (բուռն ծափեր)։

Մեր վիճակը ռազմական յաջողութիւնների ասպարէզում մնում է նոյնը և մենք հաւատացած ենք, որ մեզ կը յաջողւի յետ մղել և ազատ լինել թէ ներքին և թէ արտաքին խռովարարներից (երկարատև ծափեր)։

Տաճկական ճակատում, Օլթիի և Կարսի շրջանում, մենք գրաւել ենք ածխահարուստ մի շրջան, որը մեզ այնքան անհրաժեշտ է. մենք գրաւել ենք Օլթիի քարածուխի հարուստ հանքերը, Օլթի քաղաքով (ծափեր)։ Այդ հանքերի շնորհիւ մենք ի վիճակի կը լինենք վարել տնտեսապէս անկախ կեանք։ Մեր երկաթուղին սնւում է նաւթով։ Ադրբէջանը վերջին ամիսների ընթացքում մեզ չի տւել ոչ մի կաթիլ նաւթ։ Այդ ածուխով մենք հնարաւորութիւն պիտի ունենանք ապահովելու և օրինակելի դարձնելու մեր երկաթուղու կանոնաւոր երթևեկութիւնը և արդիւնաբերութեան զարկ տալու։